ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

««Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Զբաղվածության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր) մշակվել են ի կատարումն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» 8.2-րդ կետի, համաձայն որի՝ գործարկվելու է ընտանիքի նոր գնահատման համակարգ, վերանայվելու են գնահատման բնութագրիչները, հստակեցվելու են ընտանիքի կենսապայմանների բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերը, ներդրվելու են աղքատության փուլային հաղթահարման մոդելներ: Նախագծերը մշակվել են նշված միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

«Պետական նպաստների մասին» օրենքի համաձայն՝ անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելու կամ դրա վատթարացումը կանխելու նպատակով գործում են հետևյալ նպաստի տեսակները՝ ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ և հրատապ օգնություն, որոնք նշանակվում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա: Գործող համակարգը

գործում է դեռևս 1999թ.-ից, որը վերջին անգամ ամբողջությամբ վերանայվել է ՀՀ Կառավարության 2014թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ:

Ընտանիքների անապահովության գնահատման ներկայիս համակարգի հիմնախնդիրներն են՝

1) ցածր հասցեականությունը. մասնավորապես 2022թ–ին նախանպաստային ոչ աղքատ, սակայն նպաստ ստացող ընտանիքների մասնաբաժինը նպաստառու ընտանիքների թվում կազմել է 45% կամ բնակչության մասնաբաժինը, որը ամենաապահով 40%-ից և միջին խավից է, կազմում է 24. 6%: Ներառման սխալի այս պատկերը, որտեղ ծայրահեղ աղքատ բնակչության ներառվածությունը գործող համակարգում ցածր է, նշանակում է, որ համակարգն ունի նաև բացառման սխալներ՝ համակարգից դուրս են մնում իրականում աղքատ ընտանիքները: Ուստի այն անհրաժեշտ է վերանայել ծայրահեղ աղքատների և ստորին աղքատների ներառման հնարավորության, այդ թվում՝ երեխաների ներառման տեսանկյունից:

2) ցածր արդյունավետությունը և ազդեցությունը. մասնավորապես գործող համակարգն ունի համեմատաբար ավելի բարձր ազդեցություն ծայրահեղ աղքատության ցուցանիշի վրա 2022թ. ծայրահեղ աղքատությունը 2.5 անգամ կրճատվել է գործող նպաստների ազդեցությամբ՝ 3% նախանպաստային ծայրահեղ աղքատության փոխարեն արձանագրվել է 1.2%: Այդուհանդերձ ծայրահեղ աղքատ նպաստառու բնակչության մասնաբաժինը, որ շարունակում է մնալ ծայրահեղ աղքատ նպաստ ստանալուց հետո 2022 թ. -ին կազմել է 39%:

3) գործող գնահատման բանաձևում ընտանիքի անդամների սոցիալական կարգավիճակի վրա հիմնված ինտուիտիվ խոցելիության, ինչպես նաև տարածքային/աշխարհագրական սկզբունքի գերագնահատումը, ինչն առաջ է բերում ընտանիքների եկամուտների գնահատականի երկրորդայնություն և նպաստի իրավունք ստանալու անհավասար պայմաններ.

4) գնահատման բանաձևի, դրա մեջ մտնող ցուցանիշների և դրանց կշիռների պարբերական վերանայման և դրանցում երկրում բնակչության կենսապայմանների փոփոխության անհրաժեշտ արտացոլման բացակայությունը, ինչպես նաև դրա համար հստակ ընթացակարգեր ներդնելու կարիքը.

5) բացառող գործոնների և դրանց շեմերի վերանայման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով տնտեսական ակտիվացման խթանների ապահովումը. մասնավորապես գործող համակարգում սեփականության իրավունքով տիրապետվող բնակելի տարածքի արժեքը բացառող գործոնների շարքում չէ.

6) աշխատաշուկայում ներառման խթանների և չներառման (ստվերային տնտեսության մեջ մնալու) սանկցիաների բացակայությունը, որը համակարգի շահառուներին պասիվացնող ազդեցություն է ունենում, որի հետևանքով համակարգում աշխատունակ անձ ունեցող ընտանիքները երկարաժամկետ ներառված են մնում.

7) ակտիվացման պայմանների և ինտեգրված սոցիալական ծառայությունների (զբաղվածության ապահովման կամ խրախուսման, ինչպես նաև սոցիալական հմտությունների և վերականգնողական ծառայությունների) միջոցով կարիքներին համալիր արձագանքման համակարգի բացակայությունը, ինչպես նաև աղքատության սերնդեսերունդ վերարտադրումը, որը պայմանավորված է ցածր արդյունավետությամբ և զուտ դրամական աջակցության տրամադրմամբ, այնինչ այս ընտանիքների խնդրի համակարգային լուծումը պահանջում է անհատական դեպքի վարման միջոցով տնտեսական կարողությունների և ինքնաբավության աստիճանական զարգացում.

8) հրատապ արձագանքի համակարգի անկատարությունը, կանխարգելիչ հրատապ միջոցառումների բացակայությունը.

9) նպաստի և անապահով ընտանիքների համար նախատեսված սոցիալական ծառայությունների տրամադրման մեկ շեմի առկայությունը, որը հանգեցնում է նպաստառու դառնալու գրավչությանը: Բացի այդ, տվյալ շեմը բավարարող ընտանիքները ստանում են սահմանված բոլոր ծառայություններին հասանելիություն, այնինչ տվյալ ծառայությունների կարիք, սակայն նպաստի կարիք չունեցող ընտանիքները զրկվում են բոլոր ծառայություններից.

10) արդիական տեղեկատվական համակարգի բացակայությունը և սոցիալական պաշտանության ոլորտի տեղեկատվական շտեմարանների և արտաքին վարչական շտեմարանների հետ ավտոմատացված փոխգործելիության թույլ մակարդակը, որի հետևանքով առկա են թերի որոշումներ և հետգանձման անարդյունավետ և կամայականության ռիսկ պարունակող մեխանիզմ.

11) ընտանիքի իրական կազմի որոշման ոչ հստակ մեխանիզմները՝ վարչական տվյալների և փաստացի իրավիճակի անհամապատասխանության հետևանքով.

12) անարդյունավետ և կոռուպցիայի տեսանկյունից բարձր ռիսկայնությամբ վարչարարության առկայությունը և սոցիալական աշխատանքի ստանդարտներին համապատասխանող ընթացակարգերի ու հիմնական կատարողական ցուցանիշների համակարգի ոչ բավարար մակարդակը: Վերանայման կարիք ունեն նաև

մշտադիտարկման և գնահատման համակարգի, ծառայության տրամադրման որոշման նկատմամբ վերահսկողության գործընթացները:

Նշված հիմնախնդիրները վերացնելու նպատակով մշակվել է «Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի» հայեցակարգի նախագիծը, որի հիման վրա ամբողջությամբ խմբագրվելու է Կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշումը:

Նշված հայեցակարգի համաձայն՝ ընտանիքների անապահովության գնահատման նոր բանաձևում կիրառվելու են հետևյալ մոտեցումները:

Գնահատման նոր համակարգի հիմքում դրվում է ընտանիքի ամսական ամբողջական եկամուտը, որը հաշվարկվում է, միջազգային պրակտիկայում ստվերային տնտեսության որոշակի ծավալ ունեցող երկրներում կիրառվող հիբրիդային մեթոդով: Այս մեթոդը տարանջատում է հեշտ և դժվար ստուգելի եկամուտների շրջանակ: Հեշտ ստուգելի եկամուտներն են ֆորմալ, համապատասխան տեղեկատվական համակարգերում հավաքագրվող եկամուտները՝ աշխատավարձ, կենսաթոշակ, նպաստներ և այլն, իսկ դժվար ստուգելի եկամտի շարքում են գյուղատնտեսական եկամուտները, ոչ ֆորմալ զբաղվածությամբ ստացվող եկամուտները և այլն: Դժվար ստուգելի եկամուտները ներառվելու են ընտանիքի եկամուտում՝ վերագրումների միջոցով, որի սկզբունքներն ու այլ մանրամասներ սահմանվելու են Կառավարության որոշմամբ: Դժվար ստուգելի եկամուտների վերագրման նպատակով կիրառվելու է ակտիվների, բարեկեցության պայմանների գնահատման մոտեցումը: Նախատեսվում է, որ անապահովության նպաստի իրավունք կստանան այն ընտանիքները, որոնց տնօրինվող եկամուտները չեն գերազանցում որոշակի՝ նախօրոք սահմանված շեմը՝ բացառող գործոնների/զտիչների բացակայության դեպքում:

Ելնելով ծայրահեղ աղքատության վերացման նպատակադրումից, այդ շեմը սահմանվելու է այնպես, որ անապահովության նպաստի նոր համակարգում ընդգրկվեն այն ընտանիքները, որոնց մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտի չափը ցածր է պարենային զամբյուղի արժեքի նկատմամբ հաշվարկվող տոկոսի արժեքից: Այսինքն, նպաստների նոր համակարգի թիրախը ծայրահեղ աղքատ բնակչությունն է: Քանի որ կիրառվելու է պարենային զամբյուղի արժեքը նկատմամբ հաշվարկվող տոկոսի արժեքը, իսկ դա տարբեր է տարբեր տարիքային խմբերի համար, և ուսումնասիրությունները ցույց են տալիս, առավելագույն սպառումն իրականացվում է չափահաս անձի կողմից, իսկ երեխաների ու տարեցների պահանջարկն այդ առումով ավելի ցածր է, ուստի գնահատման նոր համակարգով ընտանիքի անդամների թիվը

հաշվարկվելու է՝ հիմք ընդունելով վերջիններիս սպառմանը տոկոսը չափահաս անդամի սպառման համեմատ (օրինակ՝ մինչև 9 տարեկան երեխայի սպառման կարիքը հաշվարկվելու է չափահաս անձի սպառման 55 տոկոսով և այլն): Ընտանիքի անդամների հաշվարկային թվով էլ կատարվելու են անապահովության նպաստի իրավունքի և նպաստի չափի հաշվարկները: Միաժամանակ ըստ խնամառության խմբի՝ ընտանիքների համար կապահովվի նպաստի չափի որոշակի հավելում: Վերջիններս այն ընտանիքներն են, որտեղ կա՛մ աշխատանքային տարիքի աշխատունակ/գործունակ/հաշմանդամ չհանդիսացող անդամներ չկան, կա՛մ որտեղ յուրաքանչյուր այդպիսի անդամ ծանրաբեռնված է 3-ից մինչև 5 խնամառու անդամով, որոնք երեխաները, տարեցներն ու 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր սահմանափակում ունեցող անձինք են: Նկատի ունենալով ընտանիքների բարձր խնամառությունը և դրանցում երեխաների և այլ խնամառուների բարձր ներկայացվածությունն ու աշխատունակ անդամների բարձր ծանրաբեռնվածությունը խնամառուներով, նախատեսվում է նախատեսել հավելում անապահովության նպաստի հիմնական չափին, ինչը թույլ կտա այս ընտանիքներին ոչ միայն հաղթահարել աղքատության պարենային շեմը և դուրս գալ ծայրահեղ աղքատությունից, այլ ունենալ մոտավորապես աղքատության ստորին շեմը լրացնող եկամուտներ և ապահովել ընտանիքի անդամների նաև որոշ այլ, ոչ պարենային հիմնական կարիքները:

Միաժամանակ, կարևորվում է ընտանիքի անդամների տնտեսական ակտիվացման խնդիրը, որի համար որպես անապահովության նպաստի նախապայման սահմանվում է զբաղվածության ակտիվացման ծրագրերում պարտադիր ներառման հնարավորությունների գնահատումն ու ներառումը:

Գնահատման նոր համակարգով նախատեսվում է նաև այդ համակարգի հիման վրա, տարբեր շեմեր սահմանելու միջոցով իրականացնել նաև այլ ոլորտներում՝ կրթություն, առողջապահություն և այլն, թիրախային և հասցեական ծրագրեր:

1.2. Առկա խնդրի առաջարկվող լուծումը

Վերը նշված հիմնախնդիրները կարգավորելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ և լրացումներ մի շարք օրենքներում, որոնց ընդունման պարագայում հնարավոր կլինի ամբողջությամբ վերանայել ընտանիքի անապահովության գնահատման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող կառավարության որոշումները: Մասնավորապես, փոփոխություններ և լրացումներ պահանջող օրենքներն են՝

- «Պետական նպաստների մասին» օրենքը.
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը.
- «Հանրակրթության մասին» օրենքը.
- «Կրթության մասին» օրենքը.
- «Փաստաբանության մասին» օրենքը.
- «Զբաղվածության մասին» օրենքը.
- «Պետական տուրքի մասին» օրենքը:

2. Կարգավորման առարկան

Նախագծերում ներկայացված սոցիալական ծառայությունից օգտվելու համար որպես ցուցանիշներ են ընդունվում Վիճակագրական կոմիտեի ՏՏԿԱՀ կիրառվող ՀՀ-ի աղքատության 4 տարբեր գծերը[1]՝

- պարենային աղքատության գիծը (ծայրահեղ աղքատության գիծ).
- աղքատության ստորին գիծը (մոտավոր կազմում է աղքատության պարենային գծի արժեքի 130 տոկոսը).
- աղքատության միջին գիծը (մոտավոր կազմում է աղքատության պարենային գծի արժեքի 160 տոկոսը).
- աղքատության վերին գիծը (մոտավոր կազմում է աղքատության պարենային գծի արժեքի 185 տոկոսը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վիճակագրական կոմիտեի կողմից նախորդ տարվա աղքատության ստորին գծի, միջին գծի և վերին գծի չափերը հրապարակվում են ընթացիկ տարվա վերջում, ուստի սոցիալական ծառայություններից օգտվելու համար որպես հիմք ընդունվել է պարենային աղքատության գիծը և դրա հիման վրա հաշվարկված տոկոսները, որոնք հավասար են աղքատության ստորին գծին, միջին գծին, վերին գծին:

Նախագծերով, մասնավորապես, առաջարկվում է՝

1. «ընտանեկան նպաստը» վերանվանել «անապահովության նպաստ».
2. սահմանել, որ

✔ անապահովության նպաստ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով (այսուհետ՝ Գնահատման կարգ) սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային

[1] https://www.armstat.am/file/article/poverty_2022_a_1.pdf

անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից և ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի ամսական հիմնական չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից.

✔ անապահովության նպաստի չափը որոշվում է՝ անապահովության հիմնական նպաստի չափին ավելացնելով հավելումը: Նախագծով նշվել է, թե ինչպես է հաշվարկվում անապահովության նպաստի հիմնական չափը և հավելումը.

3. սահմանել անապահովության նպաստի նշանակման, մերժման և ստանալու իրավունքի դադարեցման վարչական վարույթի առանձնահատկությունները.

4. «սոցիալական նպաստը» որպես նպաստի տեսակ հանել «Պետական նպաստների մասին» օրենքից, քանի որ այն նույնանում է ընտանեկան նպաստի հետ.

5. հանել երեխային ծննդյան և ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնությունը, քանի որ դրանք նույնանում են այլ նպաստների հետ (երեխայի ծննդյան միանվագ նպաստ և թաղման նպաստ).

6. «եռամսյակային հրատապ օգնություն»-ը վերանվանել «եռամսյա հրատապ օգնության», և վերանայել նշված հրատապ օգնության տրամադրման իրավակարգավորումները.

7. հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների թիվը մոտ 85. 000 է՝ ««Պետական նպաստի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանվել են որոշ անցումային դրույթներ: Մասնավորապես առաջարկվում է՝ նախատեսվող փոփոխությունները կիրառել անապահովության գնահատման նոր կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մեկ մարզում, որից հետո մնացած մարզերում և Երևան քաղաքում: Ընդ որում, նախատեսվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզում կամ Երևան քաղաքում օրենքի գործողության պահին ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքների նպաստի վճարումները շարունակել մինչև ընտանիքի հաջորդ հաշվառման (փաստագրման) ամիսը ներառյալ: Այսինքն՝ նախատեսվում է նոր համակարգի ներդրման փուլային մոտեցում, որպեսզի

մարզի բոլոր ընտանիքները միևնույն ժամանակահատվածում ստիպված չլինեն դիմելու անապահովության նպաստ նշանակելու համար: Նշված անցումային դրույթների կիրառման դեպքում հնարավորինս կապահովվի ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի անցնցում ներդրումը:

Մյուս նախագծերով կարգավորվում են ներկայումս գործող ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա տրամադրվող բոլոր ծառայությունների տրամադրման իրավունքի որոշման համար Գնահատման նոր համակարգով սահմանված շեմերի կիրառման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, առաջարկվում է

✔ անկախ առաջադիմությունից՝ ուսման վճարի լրիվ կենսաթոշակ տրամադրել մրցույթի արդյունքներով նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունում վճարովի համակարգ ընդունված կամ սովորող «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սահմանված ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքի ուսանողին.

✔ ուսման վճարի 30-100 տոկոս չափով կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում նպաստի ձևով) տրամադրել մրցույթի արդյունքներով միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում վճարովի համակարգում ընդունված կամ սովորող՝ **ըստ առաջադիմության՝** «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սահմանված ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքի ուսանողին.

✔ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սահմանված ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր

ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքի անդամներին .

✔ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված արտոնություններից թույլ տալ օգտվել «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սահմանված ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքի անդամներին և այլն:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖԻ փորձագիտական խմբի հետ համատեղ:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ստեղծել անհրաժեշտ իրավական հիմքեր ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 4.6-րդ կետի առաջին և երկրորդ պարբերությունների պահանջից: Այն է՝ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը՝ վերացնել ծայրահեղ աղքատությունը: Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից:

Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների և հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են:

Ներդրվելու է անապահովության գնահատման նոր համակարգ, որի շնորհիվ սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական: Առաջարկվող ոչ ֆինանսական ծառայությունների փաթեթներն ուղղված կլինեն մարդկանց առաջնային կարիքների բավարարմանը կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում: Կներդրվի սոցիալական խնդիրների լուծման հստակ ձևաչափ՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը: